ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱԳՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞րն է գործարարության ծրագրի արտադրական բաժնի առանցքային ցուցանիշը:** *(1 միավոր)*

1) արտադրական կարողությունը
2) կիրառվող ստանդարտները
3) ապրանքի իրացման սխեման
4) կանխատեսվող շահույթը

2 **Ո՞րն է կառավարման կազմակերպական կառուցվածքի անբաժանելի մասը:** *(1 միավոր)*

1) արարողակարգը
2) կառուցակարգը
3) աստիճանակարգը
4) համակարգը

3 **Լիազորությունը ռեսուրսների տնօրինման և կարգադրություններ անելու ինչպիսի՞ իրավունք է:** *(1 միավոր)*

1) սահմանափակ
2) ամբողջական
3) մասնակի
4) լիակատար

4 **Կառավարման ինչպիսի՞ գործառույթ է վերահսկողությունը**: *(1 միավոր)*

1) հիմքային
2) առաջնային
3) կարգավորիչ
4) եզրափակիչ

5 **Տրվածներից ո՞րն է ընկած նվազագույն աշխատավարձի սահմանման հիմքում:** *(1 միավոր)*

1) նվազագույն սպառողական վարկը
2) նվազագույն սպառողական զամբյուղը
3) նվազագույն պարենային զամբյուղը
4) նվազագույն պարենային ընտրությունը

6 **Բերվածներից ո՞րը կոնֆլիկտների լուծման միջանձնային եղանակի ոճ չէ:** *(1 միավոր)*

1) համագործակցումը
2) սահմանազատումը
3) փոխզիջումը
4) համահարթեցումը

7 **Քանի՞ մակարդակներով են ներկայացված մարդու պահանջմունքները Աբրահամ Մասլոուի պահանջմունքների դասակարգման տեսության մեջ:** *(1 միավոր)*

1) 3
2) 5
3) 11
4) 14

8 **Տարբերակներից ո՞րը *չի* դասվում նյութական խթանների շարքին՝ ըստ ժամանակակից տեսությունների:** *(1 միավոր)*

1) աշխատավարձը
2) մասնակցողականությունը
3) հավելավճարը
4) պարգևը

9 **Ի՞նչ է անգլերենից թարգմանաբար նշանակում «սթրես» բառը:** *(1 միավոր)*

1) հոգնածություն
2) հյուծվածություն
3) լարվածություն
4) ջղայնություն

10 **Տարբերակներից ո՞րը սթրեսի տարատեսակ *չէ*:** *(1 միավոր)*

1) փաստագրական
2) ֆիզիոլոգիական
3) սոցիալական
4) տեղեկատվական

11 **Բերված տարբերակներից ո՞րը շուկայի հիմնական տարր չէ:** *(1 միավոր)*

1) պահանջարկը
2) առաջարկը
3) համագործակցությունը
4) մրցակցությունը

12 **Ինչի՞դեր է կատարում գինը առաջարկի և պահանջարկի միջև:** *(1 միավոր)*

1) խթանիչի
2) բազմապատկիչի
3) փոխարկիչի
4) կարգավորիչի

13 **Ի՞նչ փոփոխություններով է պայմանավորված կառուցվածքային զործազրկությունը:** *(1 միավոր)*

1) դեմոգրաֆիական
2) կլիմայական
3) տեխնոլոգիական
4) կառավարչական

14 **Տարեկան քանի՞ տոկոսից բարձր տեմպերով են աճում գները գերսղաճի (հիպերինֆլյացիա) դեպքում:** *(1 միավոր)*

1) 100 %-ից
2) 50 %-ից
3) 10 %-ից
4) 70 %-ից

15 **Կարճ ժամանակահատվածում ինչպիսի՞ կապ կա սղաճի և գործազրկության միջև՝ ըստ Ֆիլիպսի կորի:** *(1 միավոր)*

1) անմիջական
2) աճանցիալ
3) հակադարձ
4) փոխադարձ

16 **Այլ կերպ ինչպիսի՞ քաղաքականություն են համարվում սղաճի կարգավորման ուղղակի մեթոդները:** *(1 միավոր)*

1) ներդրումային
2) հարկային
3) ծախսերի
4) եկամուտների

17 **Տրվածներից ո՞րն է մարքեթինգային հետազոտության կիրառական գործիք:** *(1 միավոր)*

1) մոտարկումը
2) դիտարկումը
3) փաստարկումը
4) հավաքագրումը

18 **Ինչպիսի՞ գործունեություն է մարքեթինգը՝ ըստ Ֆիլիպ Կոտլերի:** *(1 միավոր)*

1) սոցիալական
2) տնտեսական
3) գործնական
4) վարչական

19 **Ինչպիսի՞ բնույթ ունի վաճառքի խթանումը՝ որպես միջոցառումների համակարգ:** *(1 միավոր)*

1) ռազմավարական
2) մարտավարական
3) երկարաժամկետ
4) կարճաժամկետ

20 **Որքա՞ն է փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի՝ օրենքով սահմանված առավելագույն թույլատրելի թիվը:** *(1 միավոր)*

1) 36
2) 50
3) 25
4) 49

21 **Հաշվետվություններից ո՞րը ֆինանսական փաթեթի կազմում *չի* ընդգրկվում:** *(1 միավոր)*

1) սեփական կապիտալում փոփոխությունները
2) համապարփակ ֆինանսական արդյունքները
3) շրջանառության տեղեկագիրը
4) դրամական հոսքերը

22 **Ի՞նչ է հաշվապահական հաշվառման մեթոդը:** *(1 միավոր)*

1) Հաշվապահական հաշվառման օբյեկտների ուսումնասիրության և հետազոտության եղանակների ամբողջությունն է:
2) Երկու խումբ ցուցանիշների՝ տնտեսական միջոցների և դրանց գոյացման աղբյուրների հանրագումարային տվյալների հաշվեկշռային ընդհանրացումն է:
3) Ընթացիկ հաշվապահական տեղեկատվության ընդհանրացումն է:
4) Տնտեսական միջոցների ընթացիկ վերահսկողությունն է:

23 **Ինչպիսի՞ գնաճ է նպատակադրում Կենտրոնական բանկը:** *(1 միավոր)*

1) հաստատուն
2) լողացող
3) չափավոր
4) զսպող

24 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված համայնքային բյուջեների բաղկացուցիչ մասերի համարները:** *(1 միավոր)*

1. պահուստային, 2. վարչական, 3. ֆինանսական, 4. ֆոնդային

1) 1 և 3
2) 1 և 2
3) 2 և 4
4) 3 և 4

25 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված ուղղակի հարկերի համարները:** *(1 միավոր)*

1. ճանապարհային, 2. ակցիզային, 3. եկամտային, 4. ավելացված արժեքի

1) 1 և 4
2) 1 և 3
3) 2 և 3
4) 2 և 4

26 **Տրվածներից ո՞րը ֆինանսական ռեսուրս չէ:** *(1 միավոր)*

1) սեփական կապիտալը
2) երկարաժամկետ վարկերը
3) հիմնական միջոցները
4) կրեդիտորական պարտքերը

27 **Հաշվապահական հաշվառման վարման ո՞ր փուլին են հաջորդում տարեվերջյան ճշգրտումները:** *(1 միավոր)*

1) սկզբնական հաշվառման կազմակերպման
2) հաշիվներում գրանցման
3) գրանցամատյանների վարման
4) շրջանառության տեղեկագրի կազմման

28 **Տրվածներից ո՞ր մեթոդով են տնտեսական միջոցները ստանում դրամական արտահայտություն:** *(1 միավոր)*

1) գույքագրման
2) փաստաթղթավորման
3) գնահատման
4) կրկնակի գրանցման

29 **Որպես ի՞նչ են դասակարգվում վաճառքի համար պատրաստված հաստոցները:** *(1 միավոր)*

1) ապրանք
2) նյութեր
3) կապիտալ
4) արտադրանք

30 **Տրվածներից ո՞րը մրցակցության գործառույթ չէ: Նշել դրա համարը:** *(1 միավոր)*

1) գնագոյացման
2) հաշվեկշռային
3) կարգավորման
4) հակամենաշնորհային

31 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. կրկնակի գրանցումը
2. հաշվանցումը
3. փաստաղթավորումը
4. գնահատումը
5. հաշվեգրումը
6. գույքագրումը
7. վերագնահատումը

32 **Տրվածներից 3-ը հարկային համակարգի սկզբունքներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. համախմբվածությունը
2. թափանցիկությունը
3. գաղտնիությունը
4. պարզությունը
5. անկախությունը
6. հաշվետվողականությունը
7. օբյեկտիվությունը

33 **Տրվածներից 3-ը հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի դասեր *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. սեփական կապիտալը
2. կրեդիտորական պարտքերը
3. ծախսերը
4. փոխառությունները
5. եկամուտները
6. ընթացիկ ակտիվները
7. դեբիտորական պարտքերը

34 **Տրվածներից 3-ը առևտրային կազմակերպությունների ռազմավարական պլանավորման գործառույթի իրականացման փուլեր են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. առաքելության և նպատակների սահմանումը
2. ստանդարտների մշակումը
3. ներքին միջավայրի իրավիճակային վերլուծությունը
4. փաստացի արդյունքների համեմատումը ստանդարտների հետ
5. ճշգրտող գործողությունների իրականացումը
6. արտաքին միջավայրի գործոնների վերլուծությունը և գնահատումը
7. որոշումների ընդունման սահմանափակումների ու չափանիշների ձևակերպումը

35 **Տրվածներից 3-ը գործարարության ծրագրի (բիզնես պլան) բաժիններ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. կառավարման կազմակերպումը և անձնակազմը
2. որակի կառավարումը
3. ներդրումների կառավարումը
4. ռիսկերի կանխատեսումը և կառավարումը
5. ֆինանսական ծրագիրը և ֆինանսական ռազմավարությունը
6. փոփոխությունների կառավարումը
7. կոնֆլիկտների կառավարումը

36 **Տրվածներից 3-ը, ըստ կառավարման ժամանակակից գրականության, կառավարման հիմնական կամ ընդհանուր գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. պլանավորումը
2. կանխատեսումը
3. կազմակերպումը
4. համակարգումը
5. շահադրդումը
6. պատվիրակումը
7. լիազորումը

37 **Տրվածներից 3-ը փողի գործառույթներ են: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. հիմնական միջոցի
2. կուտակման միջոցի
3. վճարման միջոցի
4. շրջանառու միջոցի
5. փոխանակման միջոցի
6. շրջանառության միջոցի
7. փոխանցման միջոցի

38 **Տրվածներից 3-ը գործազրկության տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ֆրիկցիոն
2. սեզոնային
3. գործառութային
4. տարածաշրջանային
5. համակարգային
6. պարբերաշրջանային
7. փոխանակային

39 **Տրվածներից 3-ը վերջնական սպառողների շուկան *մարքեթինգային տեսանկյունից* հատվածավորելու չափանիշներ են: Նշել այդ տարբերակների համարները:** *(3 միավոր)*

1. ժողովրդագրական
2. ազգագրական
3. ժամանակագրական
4. ռազմավարական
5. աշխարհագրական
6. վարքագծային
7. հետագծային

40 Տրվածներից 3-ը, ըստ *նշանակության դասակարգման*, մարքեթինգային տեղեկատվության (տվյալների) տեսակներ *չեն*: Նշել դրանց համարները: *(3 միավոր)*

1. պարբերական
2. վերացական
3. տեղեկատվական
4. հանձնարարական
5. նորմատիվային
6. զգուշացնող
7. փաստաթղթային